

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԱՀԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Դեկտեմբերի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերեն դը Բրիշամբոյին՝ ուղեկցությամբ Հայաստանում ԵԱՀԿ դեսպան Սերգեյ Կապինոսի:

Ողջունելով ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի այցը Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները փոխանցեց նրան՝ վստահություն հայտնելով, որ նմանատիպ այցերը դրական ազդեցություն են ունենում համագործակցության խթանման և տարածաշրջանում հակամարտությունների խաղաղ կարգավորման գործում: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց ԵԱՀԿ գլխավոր քարտուղարին տարածաշրջանում ԵԱՀԿ ներդրած ջանքերի և իրականացվող ծրագրերի համար:

Իր հերթին ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերեն դը Բրիշամբոն շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին բարեմաղթանքների համար և ներկայացրեց ԵԱՀԿ գործունեությունը, ինչպես նաև իր այցի մանրամասներն ու արդյունքները:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Ոստիկանության կոլեգիայի կազմին՝ առաջնորդությամբ ՀՀ Ոստիկանության պետ տիար Ալիկ Սարգսյանի, ովքեր Ս. Էջմիածին էին եկել նախատոնական այս օրերին՝ ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով ներկաներին, իր Հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց նրանց՝ ընդգծելով ազգային կյանքում ոստիկանի դժվարին առաքելության կարևորությունը: «*Այս առիթով ուժ և եռանդ ենք մաղթում Ձեզ, որպեսզի կարողանաք օրենքը և օրինականությունը պահպանել և հետամուտ լինել, որ մեր զավակներն իրենց կյանքն ապրեն հանգիստ և ապահով»*,- նշեց Նորին Սրբությունը:

Իր հերթին ՀՀ Ոստիկանության պետը շնորհավորեց Նորին Սրբությանը գալիք Ամանորի և Ս. Ծննդյան տոների առիթով, ապա անդրադարձավ ոստիկանների ծառայությանը և առկա մարտահրավերներին:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայ Եկեղեցու առաքելության, ինչպես նաև հասարակության մեջ հոգևոր-բարոյական արժեքների սերմանման անհրաժեշտության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ